ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
«ԳՈՐԻՍԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ
ՏՆՕՐԵՆ

N 151

Ք. Գորիս, Գ.Տաթևացի 31, էլ. փոստ՝ info@gorismc.am
☏ (0284) 2-21-52

«22» ապրիլ 2024թ.

<ԼԻՆԱՐԵ ՄԵԴ> ՍՊԸ-Ի

ՏՆՕՐԵՆ Ա.ՇԵԳՈՒՆՑԻՆ

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Պայմանագիրը միակողմանի ամբողջությամբ լուծելու մասին

<Գորիսի բժշկական կենտրոն> ՓԲԸ-ի և <ԼԻՆԱՐԵ ՄԵԴ> ՍՊԸ-ի միջև 08.02.2024 թվականին կնքված <ՍՄԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/4/5> ծածկագրով գնման պայմանագիրը միակողմանի լուծել, քանի որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառված <ԼԻՆԱՐԵ> ՍՊԸ (ՀՎՀՀ 09212215)-ի հիմնադիրն ու տնօրենը հանդիսանում է նույն <ԼԻՆԱՐԵ ՄԵԴ> ՍՊԸ (ՀՎՀՀ 01063047)-ի տնօրենը: <ԼԻՆԱՐԵ> ՍՊԸ-ի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառված լինելն ինքնաբերաբար հանգեցնում է <ԼԻՆԱՐԵ ՄԵԴ> ՍՊԸ-ի գնումների գործընթացին մասնակցության իրավունքի սահմանափակմանը:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թվականի մայիսի 4-ի N526-Ն որոշման 119-րդ կետի 2-րդ ենթակետը՝ <Գորիսի բժշկական կենտրոն> ՓԲԸ –ն ամբողջությամբ լուծում է <ԼԻՆԱՐԵ ՄԵԴ> ՍՊԸ-ի միջև 08.02.2024 թվականին կնքված <ՍՄԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/4/5> ծածկագրով պայմանագիրը՝ 9,11,12,15,16,18,25,40 չափաբաժինների մասով:

Պայմանագիրը կհամարվի միակողմանի լուծված սույն ծանուցումը Պատվիրատուի կողմից տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրվանից:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ եթե սույն ծանուցումը ստանալուց հետո հինգօրյա ժամկետում Ձեր կողմից վճարվի պայմանագրի կատարման ապահովման և որակավորման ապահովման գումարները նշված չափաբաժինների մասով, ապա <ԼԻՆԱՐԵ ՄԵԴ> ՍՊԸ -ն չի ներառվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ ԴԱՎԻԹ ՄԱՇՈՒՐՅԱՆ